ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1981 — 1982

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ամենապատիւ
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան,
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյ,
Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր
և յարգելի հանդիսականներ.

Գոհութիւն Աստուծոյ, որ դպրոցական ամավերջի այս առիթով անգամ մը եւս կեցած ենք այս բեմին, տալու 1981–1982 *դպրոցական տարեշրջանի մեր Տեսչական Տեղեկագիրը։*

Այս տարի մեր երկսեռ աշակերտութեան թիւը եղաւ 180, *բաժնուած հետեւեալ կերպով. —*

Երկրորդական՝ 20 *մանչ,* 32 *աղջիկ*
համագումար՝ 52
Նախակրթարան՝ 37 *մանչ,* 40 *աղջիկ*
համագումար՝ 77
Մանկապարտէզ՝ 31 *մանչ,* 20 *աղջիկ*
համագումար՝ 51
Ընդամէնը՝ 180 *աշակերտ։*

Մեր խօսքը մեր աշակերտութեան մասին դարձեալ պիտի ըլլայ գնահատական. չունեցանք կարգապահական և այլ տեսակի որեւէ դժուարութիւն։ Մօտ տասնեակ մը աշակերտներ իրենց ընտանիքներուն հետ արտագաղթեցին դէպի Ամերիկա և Աւստրալիա։ Կ'ըսենք ասիկա ցաւ ի սիրտ, որովհետեւ արտագաղթը դարձած է այլեւս ցաւալի երեւոյթ Երուսաղէմի Հայ գաղութին համար։ Միջազգային նշանակութեամբ այս քաղաքին մէջ մենք պէտք ունինք թիւով և որակով կշիռք ունեցող հայկական համայնքի մը։

Մեր ուսուցչական կազմը կը բաղկանար 28 *երկսեռ, Հայ և օտար ուսուցիչներէ, որոնցմէ հինգը անդամներն են Ս. Յակոբեանց Միաբանութեան։*

Քաղաքիս ուսուցչական լաւագոյն տարրերն են որ համախմբած ենք մեր կրթական գործին շուրջ։ Անոնք արդիւնաւոր ու խղճամիտ աշխատանք տարին, ու այս առթիւ բոլորին համար ունինք միայն գնահատանքի խօսքեր ու շնորհակալութեան զգացումներ։

Մեր կրթական ծրագիրը եղաւ դարձեալ Անգլիական General Certificate of Education*ի ծրագիրը։ Ուսուցինք Հայերէն (Աշխարհաբար և Գրաբար), Անգլերէն, Արաբերէն և Եբրայեցերէն՝ չորս լեզուներ, Մաթեմաթիք, Գիտութիւն, Պատմութիւն՝ նոյն* G. C. E.*ի մակարդակով, առաւել Հայագիտական դասեր, մեր գրականութիւնը, պատմութիւնը և կրօնը։ Ուսուցման համար գործածական գլխաւոր լեզուներն էին Հայերէնը և Արաբերէնը Նախակրթարանի մէջ, իսկ Երկրորդական կարգերու մէջ՝ Հայերէնը և Անգլերէնը։*

Անցեալ տարուան մեր շրջանաւարտներէն անոնք որոնք մասնակցեցան G. C. E.*ի քննութեանց, ունեցած են հետեւեալ յաջողութիւնները. —*

Անի Տիգրանեան *յաջողած է* 6 *նիւթերու մէջ, որոնք են՝ Հայերէն, Անգլերէն, Արաբերէն լեզուներ, Անգլիական Գրականութիւն, Ուսողութիւն* (3 *ճիւղերով) և Պատմութիւն։*

Սիրայգ Ռաճոյեան՝ *Անգլերէն, Արաբերէն, Եբրայեցերէն լեզուներ, Անգլիական Գրականութիւն, Կենսաբանութիւն, Պատմութիւն։*

Անթուլլա Քարասափուլօս՝ *Անգլերէն և Արաբերէն լեզուներ, Անգլիական Գրականութիւն, Ուսողութիւն* (3 *ճիւղերով), Քիմիաբանութիւն և Բնագիտութիւն։*

digitised by A.R.A.R.@

Եւա Տէր Վարդանեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ, Անգլիական Գրականութիւն, Ուսողութիւն (3 ճիւղերով)։

Կալինա Օհաննէսեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։

Անի Սեւան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլիական Գրականութիւն։

Վիվիան Գէորգեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։

Յակոբ Սեմէրճեան՝ Հայերէն և Անգլերէն լեզուներ և Անգլ. Գրականութ.։

Նորա Գարճեան՝ Հայերէն լեզու և Անգլիական Գրականութիւն։

Անցեալ տարուայ մեր 11 շրջանաւարտներէն հետեւեալները կը շարունակեն իրենց համալսարանական ուսումը. — Անթուլլա Քարտասափուլօս, Անի Տիգրանեան, Եւա Տէր Վարդանեան, Կալինա Օհաննէսեան, Նորա Գարճեան և Վիվիան Գէորգեան։ Յակոբ Սեմէրճեան և Սիրայր Թաճոյեան այս տարի կը սկսին հետեւիլ համալսարանական ընթացքի։ Մնացեալ երեքը նետուած են գործի ասպարէզ։

Մեր տարուան մը զոյգ ընդհանուր քննութիւնները տեղի ունեցան Կիսամեակին (1981 Դեկտ. 28–1982 Յուն. 8) և Ամավերջին (1982 Մայիս 18–29), որուն իբր արդիւնք՝ 4 անյաջող աշակերտներ կը կրկնեն իրենց դասարանները։ Իսկ 16 աշակերտներ, յաջողութեամբ աւարտած մեր Վարժարանը, այսօր, Ամավերջի այս հանդիսութեան ընթացքին, կը ստանան իրենց աւարտական վկայականները։ Այդ աշակերտներն են հետեւեալները. —

Արամ Գարակէօզեան
Լեւոն Գօյաճեան
Յակոբ Սեւան
Յարութիւն Պէքարեան
Շահան Թաճոյեան
Վիգէն Սէմէրճեան
Աննա Օրէափուլօս
Ժագլին Նալպանտեան
Լուսին Մէնէշեան
Մէրի Քահքէճեան
Նորա Պետրոսեան
Սեդա Թադէոսեան
Սիլվա Փանոսեան
Սուզան Աղապէկեան
Քնարիկ Պէհէսնիլեան
Ցէորա Տէտա

Ասոնցմէ վեցը պիտի շարունակեն իրենց ուսումնական աշխատանքները, հետեւելով համալսարանական դասընթացքներու, երկուքը պիտի հետեւին արհեստագիտական յառաջացեալ դասընթացքներու, իսկ ութը պիտի նետուին գործի ասպարէզ։

Հայաստանի Պետական Համալսարանին աշակերտելու համար երեք շրջանաւարտի համար կատարուած է դիմում, իսկ երկու աշակերտի համար ալ՝ Հայաստանի արհեստագիտական դասընթացքներուն։ Անցեալ տարուայ մեր շրջանաւարտ աշակերտ Սիրայր Թաճոյեանի համար եւս կատարուած է դիմում, որպէսզի հետեւի Երեւանի Համալսարանի դասընթացքներուն։ Նախորդ տարիներէն այժմ Հայաստանի մէջ ունինք 13 աշակերտներ։

Այս տարի Մանկապարտէզի աշակերտներէն 11 հոգիներ կ'անցնին Նախակրթարանի բաժին։ Անոնք իրենց վկայականները ստացան Մանկապարտէզի Ամավերջի Հանդէսին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 30 Մայիսին։

Երբ կը խօսինք Վարժարանիս նախորդ տարիներու շրջանաւարտներուն մասին, կ'արժէ այստեղ յատկապէս յիշել որ անոնցմէ Օր. Ալին Տէր Վարդանեան աւարտեց Պիր Զէյթ Գոլէճը և ստացաւ Անգլ. Գրականութեան մէջ իր B. A.-ի (Bachelor of Arts) տիտղոսը բացառիկ յաջողութեամբ։ Ան 300 աշակերտներու մէջ ստացած է բարձրագոյն միջինը (90%) և այժմ կը պաշտօնավարէ նոյն հաստատութեան մէջ իբրև ուսուցիչ։ Դարձեալ մեր աշակերտներէն ուրիշ երկուքը՝ Պօղոս և Վահէ Գարճեան եղբայրներ, բացառիկ յաջողութեամբ աւարտած են իրենց համալսարանական ընթացքը և կը պաշտօնավարեն՝ առաջինը որպէս բժիշկ և երկրորդը իբրև ճարտարագէտ։ Դարձեալ ուրիշ երեք աշակերտներ՝ Անի Տիգրանեան, Կալինա Օհաննէսեան և Խաչիկ Տէր Վարդանեան բացառիկ յաջողութիւններ արձանագրած են իրենց համալսարանական դասընթացքներուն մէջ։ Իսկ Գարէտ Սաֆեան գերազանց նիշերով ստացած է M. S. տիտղոսը գեղձերու մասնագիտութեան (Endochrinology) մէջ։ Ան անցեալ տարի ստացած էր պատուոյ նիշերով իր

digitised by A.R.A.R.@

B.S.c նույն ճիւղին մէջ, իսկ յետաջիկայ տարի պիտի ստանայ իր Ph.D.ն։

Հոգ տարինք մեր աշակերտներու հոգևոր – կրօնական գաստիարակութեան՝ կրօնքի դասաւանդութիւններով։ Տօնական առիթներով անոնք մասնակցեցան Ս. Հաղորդութեան Խորհուրդին։ Կիրակի օրեր խմբովին առաջնորդեցինք զանոնք եկեղեցի, իսկ տօնական առիթներով անոնք մասնակցեցան արարողութեանց, իրենց մասնական քաջալերանքներ ձայնին ու շնորհքին նպաստելով։

Երկսեռ աշակերտութեան համար, մեր մարմնակրթանքի աշխատանքները եւս շարունակուեցան ըստ նախընթացի, ամենօրեայ յատուկ պահերով, որոնց արդիւնքը ներկայացուեցաւ մեր հանրութեան՝ մարզական դաշտանդէսով մը, որ տեղի ունեցաւ Մայիս 9, կիրակի, նախկին ժառ. վարժարանի խաղավայրին վրայ։

Նմանապէս շարունակեցինք ձեռագործի պահերը, որոնց արդիւնքը ի վերջոյ դրուեցաւ կիրակի, 16 Մայիսին, մեր տարեկան Գաղարի, որուն կ'ընկերակցէր խրախճանքի բաժին մը։ Ձեռագործի արդիւնքը եղաւ 700.000 Իտ. Լիրա, որ պիտի երևի գալիք տարուան մեր Տեղեկագրին մէջ։

Իսկ կիրակի, Յունուարի 10ին ունեցանք մեր Ամանորի խրախճանքի օրը, որ վարժարանիս ապահովեց 150.000 Իտ. Լիրայի գումար մը։

Այս ձեռնարկներուն առթիւ յատուկ շնորհակալութեան պարտք ունինք մեր նուիրատուներուն և ձեռնարկները կազմակերպող ուսուցչական կազմին ու տիկիններուն։

Ուսումնական ու բարոյական այս ուղղութեան կը միացնենք նաև մեր ելեմտական տեղեկագիրը, որ հետևեալն է.

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՑՈՒՄԻ ԵԼԵՄՏԻՑ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

1981 Ցուլիս 1 — 1982 Ցունիս 30

ՄՈՒՏՔ

	Ի. Լ. Ակ.
Պարտատու ի գրամարկղ, փոխադրեալ 1981 – 1982 տարեշրջանէն	1,293,246.47
Նուիրատուութիւններէ	12,847,360.00
Ուսանողական տարեթոշակներէ	1,855,045.00
Դասագիրքերէ և դասատետրերէ (ծախքերը դեղչելէ ետք)	18,000.00
Հանդէսներէ, ձեռնարկներէ և 1981ի Գաղարէն	615,670.00
Մանր մուտքերէ	4,500.00
Ընդհ. Մուտք	16,633,821.47

ԾԱՂ

	Ի. Լ. Ակ.
Ամսականք պաշտօնէութեան	11,159,100.00
Դասագիրք, տետրեր, տարբերաւծարանի գործիքներ, հանրագիտարաններ	192,050.00
Գրենական պիտոյք	61,120.00
Թղթատարական ծախքեր	72,160.00
Ձեռագործի նիւթեղէնք	64,800.00
Մանր ծախք և մաքրութիւն	22,856.00
Հանդիսական ծախքեր	65,700.00
Շինուածական ծախքեր և կահոյից նորոգութիւնք	66,800.00
Ցպագրական ծախքեր	4,905.00
Բացակի ծախքեր և պատասխանութիւն	34,810.00
Հիւանդ ուսուցչի մը նստուցում (գործէ քաշուելու առթիւ)	172,200.00
Ընդհ. Ելք	11,916,601.00
Պարտատու ի գրամարկղ, որով վճարելի են ուսուցիչներու ամսականային արձակուրդի ամսականները	2,817,320,47
Անձեռնմխելի կարօտ ուսանողաց Ֆոնտ	1,900 000.00
	16,633,821.47

digitised by A.R.A.R.@

Այստեղ խորին երախտագիտութեամբ պիտի յիշենք անունները ու նուիրատուութիւնները մեր պատուական բարերարներուն, որոնք անսալով մեր սրտագին կոչերուն, իրենց վաստակէն բաժին մը հանեցին նաև մեր կրթական գործին, և որոնք մեզի հետ եղան ազնիւ աշխատակիցները այս համազգային, կրթական, հոգևոր ու բարոյական ձեռնարկին և բերին իրենց սէրն ու գուրգուրանքը Հայ Մանուկին, ապագայ Հայ Սերունդին, այսու հանդիսանալով մեր տարուան մը կրթական կեանքի նուաճումներուն ողնոսկրը։ Պէտք է ըսել որ առանց իրենց, մենք պիտի չկարենայինք արդիւնաւորել այն՝ ինչ որ ունեցանք իբրև արդիւնք։ Կ'աղօթենք բոլորս իրենց բարգաւաճ, բարօր կեանքին և արեւշատութեան համար, և կը հայցենք իրենց համար մեր Թարգմանիչ Սուրբ Հայրերուն օրհնութիւնները։

Ստորև կու տանք անունները բոլոր յարգելի նուիրատուներուն, իրենց նուիրած գումարներով միասին։ —

Գումարները տրուած են Իսրայէլեան Լիրայով։

Տէր և Տկ. Արտաշէս Սարեան, Ամեր.	1,220,000
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն, Լիզպոն	1,200,000
Վարդգէս Երէցեան, Գարագաս	1,100,000
Տէր և Տկ. Զարեհ Պոռուկեան, Ամեր.	775,000
Խաչատուր Սէֆէրեան, Հար. Ամեր.	680,000
Կոպեռնիկ Սէֆէրեան, Հար. Ամերիկա	640,000
Ռիչըրտ Կրէկորի, Ամերիկա	400,000
Վերա և Գէորգ Գարակէօզեան, Հար. Ամերիկա	370,000
Գէորգ և Աստրինէ Վարդապարոնեան, Հար. Ամերիկա	340,000
Տէր և Տկ. Ալեքս և Մարի Մանուկեան	310,000
Կիւլլապի Կիւլպէնկեան Հաստատ.	290,000
Երուսաղէմի Քաղաքապետարան	250,000
Տէր և Տիկին Եդ. Փանոսեան, Ամեր.	210,000
Հաուըրտ Գարակէօզեան Հաստատ.	200,000
Արփարեան Աւանդի Հիմն., Լոնտոն	190,000
Կրթական Նախարարութ., Երուսաղէմ	178,260
Համաեբրաստ. Վերաշ. Միութիւն	160,000
Տէր և Տիկին Ճօն Կապրիէլ, Ամեր.	156,000
Ռիչըրտ և Կլօրիա Մահտեսեան, Ամ.	155,000
Ռուլթըր և Քարոլ Գարապեան, Ամեր.	155,000
Սուրէն Ցէնձեան, Ամերիկա	140,000
Հ. Բ. Ը. Մ. — Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան Հիմնարկութիւն	135,000
Տիկին Ալիս Գավուքճեան, Ամերիկա	130,000
Միհրան Խաչէֆեան Հիմն., Լոնտոն	121,000
Տկ. Մարթա Տիարպէքիրեան, Պ. Այրէս	120,000
Գրիգոր և Սարգիս Ասլանեան, Ամեր.	80,000
Օր. Նայեմի Պէրպէրեան, Ամերիկա	70,000
Կրէկորի և Էմմա Մելիքեան, Ամերիկա	60,000
Տիկին Տօլօրէս Լէյպման, Ամերիկա	58,000
Վարդան Գարամեան, Ամերիկա	45,000
Տքթ. և Տիկին Եդ. Կօրէք, Ամերիկա	43,000
Նշան Մաճարեան, Ամերիկա	38,000
Գոլորատոյի Հայ համայնք	36,000
Միշէլ և Հէլկա Բարթայեան, Ամերիկա	36,000
Տէր և Տիկին Գարաքէհեան, Ամերիկա	36,000
Օքլէնտի Տիկնանց Միութիւն	33,000
Տիգրան Մըսըրլեան, Ամերիկա	32,500
Տկ. Արմիսթր Ամէթճեան-Սթալի, Ամեր.	32,000
Հ. Օ. Մ., Երուսաղէմ	29,000
Խարբերդի Հայրենակց. Միութիւն	27,000
Տէր և Տիկին Պէրի Զօրթեան, Ամերիկա	27,000
Տէր և Տիկին Զ. Սարաֆեան, Ֆրանսա	25,000
Ֆէյրլօունի Ս. Ղևոնդ Եկեղեցի	24,100
Հայ Կին Ակումբ, Պոսթըն	24,000
Լեւոն Պալեան, Ամերիկա	22,000
Տիկին Լիլի Աղապապեան, Ամերիկա	22,000
Սարգիս և Մելինէ Գալֆայեան, Ամեր.	21,000
Տէր և Տիկին Արա Հայկ, Ամերիկա	20,000
Ճօրճ և Աննա Լաքցեան, Ամերիկա	20,000
Տօրեան Հաստատութիւն, Ամերիկա	20,000
Օր. Հէլէն Մէճեան, Ամերիկա	18,000
Նշան Մաճարեան, Ամերիկա	18,000
Մարթին և Վարսենիկ Արգարեան, Ամ.	18,000
Նիւ Եորքի Ս. Նահատակաց Դպրոց	17,500
Տէր և Տիկին Յակոբ Նազըրեան, Ամ.	17,500
Գոհար և Ճօրճ Հավէլքա, Ամերիկա	17,000
Տքթ. Ճէրալտին Կրէկորեան, Ամերիկա	17,000
Տէր և Տիկին Մարթին Մարտիրոս, Ամ.	17,000
Օր. Արաքսի Թաշճեան, Ամերիկա	16,500
Ժոզէֆ և Էլսի Զալմըրզ, Ամերիկա	16,000
Հայ Ամերիկեան Վեթերաններ	15,000
Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան, Ամեր.	14,500
Օր. Էլսի Տօնիկեան, Ամերիկա	14,500
Սարգիս Ճգնաւորեան, Ամերիկա	14,500
Սուրէն Աբրահամեան, Ամերիկա	14,500
Հայկ Խանճեան, Ամերիկա	14,500
Անդրանիկ Եանկոյեան, Աւստրալիա	14,500
Շիքակոյի Ս. Յովակիմ և Աննա Կիրակնօրեայ Դպրոց	14,200
Տիկին Հռութ Ասլանեան, Ամերիկա	14,000
Պոսթընի Տիկնանց Միութիւն	14,000
Ստեփան Գաստալեան, Լոնտոն	14,000
Տէր և Տիկին Ֆրանսիս Ուիլիամս, Ամ.	14,000
Յակոբ և Երուանդ Խաչէֆեան, Լոնտոն	14,000
Ֆէյրլօունի Տիկնանց Միութիւն	13,500
Զարլզ և Մէրի Վարդանեան, Ամերիկա	13,500
Ռուտրի Երիտ. Տիկնանց Միութիւն	13,000
Տիկին Աղաւնի Զէրչեան, Պ. Այրէս	12,000
Տիկին Սիրվարդ Գասուքսօրեան, Ամ.	12,000
Արամ և Աննա Հինդլեան, Ամերիկա	12,000
Տքթ. և Տկ. Գէորգ Քիւրանեան, Ամեր.	12,000
Տէր և Տիկին Վ. Գրիգորեան, Անգլիա	12,000
Վարուժան Հայրապետեան, Ամերիկա	12,000
Տէր և Տիկին Ալֆրէտ Բիրանեան, Ամ.	12,000

digitised by A.R.A.R.@

Մարկոս Թաշճեան, Ամերիկա	12,000
Ռիչըրտ և Ալլէն Պէյլէրեան, Ամերիկա	12,000
Տէր և Տիկին Վ. Բարէլեան, Ամերիկա	12,000
Տէր և Տիկին Հայկ Գազանճեան, Ամեր.	12,000
Վարդանիկ և Ռոզ Սամարեան, Ամեր.	12,000
Ճօն և Էլիանոր Թէյլ, Ամերիկա	12,000
Տէր և Տիկին Վահրամ Գօյաճեան, Ամ.	12,000
Տեարց և Տիկնանց Ակումբ, Հէյվըրհիլ	12,000
Տիկնանց Միութիւն Հէյվըրհիլի Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ	12,000
Տէր և Տիկին Կ. Գրիգորեան, Լոնտոն	11,500
Օր. Էլիզաբէթ Ճամիրեան, Ամերիկա	11,500
Տէր և Տիկին Կ. Քէլճիքեան, Լոնտոն	11,400
Ֆէյրլօունի Երեց Անդամներու Կզմկ.	11,200
Գէորգ Գօղասեան, Աւստրալիա	11,000
Օր. Անի Պէրպէրեան, Ամերիկա	11,000
Ճէյմս և Տէպի Անթառամեան, Ամեր.	10,000
Վահէ Գարճեան, Ամերիկա	10,000
Համազասպ Վարդանեան, Ս. Փաուլօ	10,000
Փաուլօ Ներսէսեան, Ս. Փաուլօ	10,000
Խորէն Շամլեան, Ս. Փաուլօ	10,000
Ճօզէ Տիչչէքէնեան, Ս. Փաուլօ	10,000
Ճօզէ Սէրայտարեան, Ս. Փաուլօ	10,000
Գրիգոր Արովեան, Ս. Փաուլօ	10,000
Գառնիկ Գազարեան, Ս. Փաուլօ	10,000
Տքթ. Արամ և Վերժին Գասպարեան, Ամ.	10,000
Աբգար Զաքարեան, Հայֆա	10,000
Տիկին Լիլիան Գօյաճեան, Ամերիկա	10,000
Հայ Տիկնանց Միութիւն, Թէնէֆլայ	10,000
Դստերք Վարդանանց, Ամերիկա	10,000
The Triple X Fraternity	10,000
Օր. Ռոզ Վարդանեան, Ամերիկա	9,900
Զարդարեան Հաստատութ., Ամերիկա	9,500
Տիկին Բերկրուհի Սվաճեան, Ամերիկա	9,000
Տիկին Նուարդ Գարակէօզեան, Ամեր.	9,000
Վան Նիւսի Կիրակնօրեայ Վարժարան	8,500
Նորման և Ալիս Մատոնեան, Ամերիկա	8,500
Տքթ. Միքայէլ Առաքելեան, Ամերիկա	8,500
Օր. Հէլէն Հաննէսեան, Ամերիկա	8,500
Փիթըր և Տօլօրէս Տրիվաս, Ամերիկա	8,400
Տէր և Տիկին Կարօ Զուրմաճեան, Ամեր.	8,000
Տէր և Տիկին Պէնսիվէնկա, Ամերիկա	8,000
Հայ Եկեղեցւոյ Եղբայրակցութ., Պ. Այրէս	7,500
Յակոբ Տէլլաքեան, Ամերիկա	7,500
Սամուէլ Յակոբեան, Ամերիկա	7,500
Ալպէրթ և Մարգրիտ Բարեջանեան, Ամ.	7,200
Եդուարդ և Պէրթա Գազանճեան, Ամեր.	7,200
Հէրրի Կարապետեան, Ամերիկա	7,200
Օր. Տիանա Մարթինզ, Ամերիկա	7,000
Տքթ. Պօղոս Գարճեան, Ամերիկա	7,000
Տէր և Տիկին Արնի Աւետեան, Ամերիկա	7,000
Տէր և Տիկին Ֆրէնք Սապնէքըթ, Ամեր.	7,000
Տիկին Արտեմիս Մահտեսեան, Ամերիկա	7,000
Վարդուհի և Ղուկաս Կրէկօրի, Լոնտոն	6,500
Տէր և Տիկին Միլթըն Ուիլիամս, Ամեր.	6,500
Յարութիւն Արապեան, Պ. Այրէս	6,500
Գրիգոր Արապեան, Պ. Այրէս	6,500
Օննիկ Արապեան, Պ. Այրէս	6,050
Յովհաննէս Մինասեան, Պ. Այրէս	6,500

Օր. Ֆլօրէնս Ճաղալեան, Ամերիկա	6,500
Տիկին Ֆիլիս Մարթինզ, Ամերիկա	6,500
Հայկ Գալուստեան, Լոնտոն	6,500
Տիկին Ագնիւ Հաճընլեան, Ամերիկա	6,500
Տիկնայք Քարմէն Քէթլի և Սօֆիա Պէլկին, Գանատա	6,000
Օր. Հէլէն Յակոբեան, Ամերիկա	6,000
Տիկին Ագնէս Գըրճեան, Ամերիկա	6,000
Արմինէ և Պերճ Արազ, Ամերիկա	6,000
Սարգիս և Մարթա Գօզասեան, Ամերիկա	6,000
Տէր և Տիկին Գ. Կօփիկեան, Ամերիկա	6,000
Աւագ և Ռոզ Աւագեան, Ամերիկա	6,000
Սուրէն և Թագուհի Դանիէլեան, Ամեր.	6,000
Քարլ և Իռմա Վարպատեան, Ամերիկա	6,000
Գէորգ և Սիլվիա Ստեփան, Ամերիկա	6,000
Տէր և Տկ. Համբար Գարակէօզեան, Ամ.	6,000
Տիկին Ռօզա Փարսամեան, Ամերիկա	6,000
Նազարէթ և Մարգրիտ Ազարեան, Ամ.	6,000
Օր. Էլէն Ֆարաշեան, Ամերիկա	6,000
Տիկին Աննա Խանտիկեան, Ամերիկա	6,000
Տիկին Սէլիա Խանտիկեան, Ամերիկա	6,000
Վահրամ և Տիանա Քէպապճեան, Ամեր.	6,000
Տէր և Տկ. Գալուստ Փարսամեան, Ամ.	6,000
Տէր և Տիկին Էրնըսթ Ճարփ, Ամերիկա	6,000
Արա և Աննա Եագուպեան, Ամերիկա	6,000
Ֆրանք Պէյլէրեան, Ամերիկա	6,000
Կիրակնօրեայ Դպրոց, Ս. Ֆրանչիսկօ	6,000
Տիկին Մարօէլ Ճօնսըն, Ամերիկա	6,000
Տիկին Եղիսաբէթ Սուրապեան, Ամեր.	6,000
Ճօն Մուշեան, Ամերիկա	6,000
Օր. Ալիս Յակոբեան, Ամերիկա	6,000
Տէր և Տիկին Գասսօլի, Աւստրալիա	6,000
Տիկին Սիրանոյշ Շիմշիրեան, Ամերիկա	6,000
Ճօն Կիրակոսեան, Ամերիկա	6,000
Տիկին Վարդուհի Մովսէսեան, Ամերիկա	6,000
Տիկին Մարիցա Համայեան, Ամերիկա	6,000
Տիկին Արուսեակ Տէվէճեան, Ամերիկա	6,000
Տէր և Տիկին Յ. Գօյաճեան, Ամերիկա	6,000
Օր. Արմենուհի Յակոբեան, Ամերիկա	5,800
Տէր և Տիկին Յ. Մութաֆեան, Լոնտոն	5,700
Տէր և Տիկին Յ. Արթան, Լոնտոն	5,700
Աւետիս Քէլճիքեան, Լոնտոն	5,700
Օր. Թէրէզա Թարայեան, Ամերիկա	5,500
ՈՒՆՐՈՒԽ	5,400
Յակոբ Շէօհմէլեան, Երուսաղէմ	5,000
Տէր և Տկ. Գէորգ Քիւրքճեան, Լոնտոն	5,000
Տէր և Տկ. Յովհ. Քիւրքճեան, Լոնտոն	5,000
Տէր և Տկ. Սարգիս Քիւրքճեան, Լոնտոն	5,000
Օր. Մէրսիտէս Սարաֆեան, Գանատա	5,000
Հայ Եկղց. Տիկնանց Միութ., Մոնթրէալ	5,000
Տիկին Վիօլէթ Թովմասեան, Ամերիկա	4,800
Մելքոն Սարաճեան, Ամերիկա	4,700
Գ. Ս. Թահթա, Լոնտոն	4 500
Ստեփան Յանիկեան, Աւստրալիա	4,200
Օր. Տէպօրա Թօմլինսըն, Ամերիկա	4,000
Գարճեան Եղբայրներ, Ամերիկա	3,500
Վահէ Մուրատեան, Ամերիկա	3,500
Յ. Ունճեան, Անգլիա	3,300

digitised by A.R.A.R.@

Մեր Տեղեկագրի վերջաւորութեան, կը յիշատակենք շարք մը պատուական և մեծահոգի անձնաւորութիւններ, որոնք մեծագումար նուիրատուութիւններով պահեցին ամբողջական դասարաններ։

Մեր բոլորին որդիական սէրը, երկիւղած յարգանքն ու երախտագիտութիւնները կը յայտնենք Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, որուն հայրական բարեհաճ կարգադրութեամբ այս տարի ևս օգտուեցանք Արգարեան Աւանդի խնամակալութենէն (Լոնտոն), 600 Սթերլինի նուիրատուութեամբ։

Մեր սրտագին ու յարգալից շնորհակալութիւնները Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեանս Նախագահ Տիար Ալեքս Մանուկեանի և իր ազնուափայլ Տիկնոջ՝ Մարիի, մեր կրթական գործին նկատմամբ իրենց ցոյց տուած հոգածու և ազնիւ հովանաւորութեան համար։ Նորին Վսեմութեան կարգադրութեամբ մեր վարժարանը ամէն տարի կը ստանայ 1000 Տոլարի նուիրատուութիւն մը Հ. Բ. Ը. Մ.- Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան Հիմնադրամէն, իսկ տարեւոյս ընթացքին, անոնք մեր կրթական գործին օժանդակեցին 3000 Տոլարի նուիրատուութեամբ։

Մեր խոր երախտագիտութեան խօսքը Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան (Լիզպոն), որ այս տարի 3000 Տոլարի նուիրատուութեամբ օժանդակեց մեր կրթական գործին։ Անկէ զատ, 2500 Տոլարի բացառիկ նուիրատուութեամբ յանձնառած է կատարել կարգ մը շինարարական նորոգութիւններ մեր վարժարանէն ներս, որոնք պիտի իրագործուին մեծ արձակուրդի ընթացքին։

Շնորհակալութեան խօսք ունինք Ամերիկայի Համասեբաստահայ Վերաշինաց Միութեան (Pan Sebastian Compatriotic Union), որ 1000 Տոլարի տարեկան նուիրատուութեամբ դասարան մը կը պահէ մեր վարժարանէն ներս «Սեբաստիոյ Ս. Նշան Վանքի անունով։

Երախտագիտութեան զգացումներով կը յիշատակենք անունները Հարաւային Ամերիկայէն Սէֆէրեան ընտանիքին և անոր զանազան ճիւղաւորումներուն (Սէֆէրեան, Վարդապետեան, Սարեան), որոնք կը պահեն չորս դասարաններով ամբողջ յարկաբաժին մը։ Այս ընտանիքները, իրենց առատաձեռն նուիրատուութիւններով, շատ դրական նպաստ մը բերին մեր կրթական գործին նիւթական ժառանգութիւններուն յարդարման։ Մանրամասնելով՝

Նորոգ հանգուցեալ Տիար Կոպեռնիկ Սէֆէրեան նուիրաբերեց 4000 Տոլար, պահելու համար իր անունով ամբողջ դասարան մը։

Տիար Էդուարդ Սէֆէրեան և մայրը՝ Տիկին Քէթրին նուիրաբերեցին 4000 Տոլար, բարեբարելով իրենց անունով դասարան մը։

Տէր և Տկ. Գէորգ և Աօրինէ Վարդապետեաններ 2000 Տոլարի նուիրատուութեամբ պահեցին իրենց անունով դասարան մը։

Տէր և Տիկին Արտաշէս և Սօնա Սարեաններ 2000 Տոլարի նուիրատուութեամբ պահեցին դասարան մը իրենց ընտանիքի անունով։

Այստեղ ցաւով պէտք է յիշենք անակընկալ մահը մեր բարերարին՝ Տիար Կոպեռնիկ Սէֆէրեանի, որուն համար կատարեցինք յատուկ հոգեհանգստեան պաշտօն։ Իսկ այս առթիւ պէտք է խորին երախտագիտութեամբ յիշատակել որ իր քրոջ զաւակը՝ Տիար Արտաշէս Սարեան և իր ազնիւ տիկինը՝ Սօնա, 10,000 Տոլարի ուրիշ նուիրատուութիւն մը ըրին մեր վարժարանին, ի յիշատակ իրենց պատուական և շատ սիրելի մօրեղբօր։ Իսկ մենք, յաւերժացնելու համար յիշատակը մեր մեծանձն հանգուցեալ բարերարին, յարմար նկատեցինք սոյն գումարը պահել անձեռնմխելի, և անոր հասոյթը յատկացնել կարօտ ուսանողներու դաստիարակութեան, այնպէս կրկնակիօրէն արժեւորելով Տէր և Տիկին Արտաշէս և Սօնա Սարեաններուն երկիւղած սէրն ու յարգանքը հանդէպ իրենց հանգուցեալ մօրեղբօր։

Մեր սրտագին շնորհակալութիւնները Տէր և Տիկին Զարեհ (Փօլ) Պուլկեաններուն, որոնք 2500 Տոլարի նուիրատուութեամբ կը տնտեսեն մեր Մանկապարտէզը, որ իրենց հանգուցեալ մօրաքրոջ ի յի-

digitised by A.R.A.R.@

շատակ, կը կոչուի Մանիա Տէր Մեսրոպ կան Մանկապարտէզ։ Ան եղած է Սեբաստիոյ առաջին ուսուցչուհին և Մանկապարտիզպանուհին։

Սրտագին շնորհակալութիւններ՝ Հարաւային Ամերիկայէն Տիար Վարդգէս Երէցեանին, որ 8000 Տոլարի նուիրատուութեամբ պահեց այս տարի դասարան մը իր հանգուցեալ Տիկնոջ՝ Էլվիրի ի յիշատակ։ Ցոր երախտագիտութեամբ պէտք է յիշատակենք այստեղ որ Պր. Երէցեան այնքա՛ն խանդավառուած է մեր դպրոցի կրթական աշխատանքով ու յաջող ընթացքով, որ այս տարի ինքնաբեր սիրով մը իր նուիրատուութիւնը բարձրացուց հինգէն՝ ութ հազար Տոլարի։ Կ'ողջունենք ի սրտէ իր հանգուցեալ և սիրելի Տիկնոջ հոգւոյն հանգստեան համար։

Մեր զգածուած շնորհակալութիւնները Հաւատարիմ Գարակէօզեան Հիմնարկութեան և անոր ազնուափայլ Նախագահուհիին՝ Օր. Լէյլա Գարակէօզեանին, որ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի ևս պահեց ամբողջական դասարան մը ի յիշատակ հանգուցեալ Հաւատարիմ Գարակէօզեանի։

Շնորհակալութիւններ Տէր և Տիկին Եդուարդ և Հէլէն Մարտիկեան զոյգին, որոնք տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ դասարան մը կը պահեն իրենց և իրենց գերդասանի անունով։

Երախտագիտութեան խօսքեր ունինք Տէր և Տիկին Իսուրբրտ Փանոսեաններուն, որոնք 1500 Տոլարի տարեկան նուիրատուութեամբ ամբողջ դասարան մը բարերարեցին իրենց ընտանիքի անունով։

Խորին շնորհակալութեամբ կ'արձանագրենք անունները Հարաւային Ամերիկայէն Տէր և Տիկին Գէորգ և Վարա Գարակէօզեաններու, որոնք մօտ 2000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի ևս բարերարները հանդիսացան իրենց անունով դասարանի մը։

Շնորհակալութիւններ Տէր և Տիկին Ճան և Ակնէս կապրիէլին, որոնք այս տարի ևս 1000 Տոլարի նուիրատուութեամբ բարերարեցին դասարան մը։

Նմանապէս Գալիֆորնիայէն Տէր և Տիկին Ռիչըրտ և Կլորիա Մահեսեաններ 1000 Տոլարի տարեկան նուիրատուութեամբ պահեցին դասարան մը իրենց ընտանիքի անունով։ Շնորհակալութիւններ իրենց։

Տէր և Տիկին Ուոլթըր և Քէրոլ Գաբրիէլեաններ ա՛լ միայն 1000 Տոլարի նուիրատուութեամբ պահեցին ամբողջական դասարան մը, այլև իրենց սէրն ու հոգատարութիւնը հանգէպ Սրբոց Թարգմանչաց վարժարանի գործին վերածեցին գործնական բարիքներու՝ իրենց ընկերային դայն չրջանակէն ներս։ Շնորհակալութիւններ իրենց։

Շնորհակալութիւններ Կիլլիգիկիլպէնկեան Հատատատութեան ի Նիւ Եորք, որ տարիներէ ի վեր 2000 Տոլարի նուիրատուութեամբ ամբողջական դասարան մը կը պահէ Հատատատութեան անունով։

Շնորհակալութիւններ Ամերիկայէն Տիար Սուքէն Ֆէճեանին, որ իր և իր գերդասանի անունով կը պահէ Ֆէճեան դասարանը, տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ։

Տիար Ռիչըրտ Կրէկօրի 3000 Տոլարի նուիրատուութեամբ պահեց դասարան մը, իր սիրեցեալ մօր՝ հանգուցեալ Տիկին Ալիս Գարագաշեան-Կրէկօրիի անունով։ Շնորհակալութիւններ իրեն։ Ատուած լուսաւորէ հանգուցեալ և սիրեցեալ իր մօր հոգին։

Մեր վարժարանի նախկին տնտեսն, այժմ Ամերիկարնակ Տէր և Տիկին Գրիգոր և Յասմիկ Ծատուրեաններ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը պահեն Ծատուրեան դասարանը մեր վարժարանէն ներս, որ եղած է իրենց մանկութեան առաջին բոյնը։ Շնորհակալութիւններ իրենց՝ մեր երախտագէտ ցաւերուն։

Շնորհակալութիւններ Ամերիկարնակ ազնուափայլ Տիկին Ալիս Փավուքճեանի, որ այս տարի իր հանգուցեալ ամուսնոյն՝ ազգային բարերար Հայկ Փավուքճեանի անունով բարերարեց ամբողջական դասարան մը։

Հարաւային Ամերիկայէն Տիար Մանուկ Տիարպէքիրեան, տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը բարերարէ Սարգիս Տիարպէքիրեան անունով ամբողջական դասարան մը։ Շնորհակալութիւն ազնիւ նուիրատուին։

Դարձեալ Հարաւային Ամերիկայէն Տիկին Մարթա Տիարպէքիրեան և իր

digitised by A.R.A.R.@

գուսարը՝ Ալէկբա պարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի բարեբարբին գուսարան մը իրենց հանգուցեալ ամուսնոյն և հօր՝ Յովհաննէս Տիրպէքիրեանի անունով։ Շնորհակալութիւն իրենց։

Խորին շնորհակալութիւններ Լանսանէն Յակոբ և Երուանդ Խաչիկեան եղբայրներուն, որոնք պարեկան 500 Սիրլինի նուիրատուութեամբ ինքնաբեր մզումով յանձն առին բարեբարութիւնը գուսարանի մը, ի յիշատակ իրենց հանգուցեալ հօր՝ Միհրան Խաչիկեանի։ Աստուած լուսաւորէ իր հոգին։

Երախտագիտութեամբ կը յիշենք անունը նոնոտակ գրագէտ Գրիգոր Զօնրոտի գուսար՝ Տիկին Տօլորէս Էլեյմանի, որ քան նախընթացի, այս տարի ևս օգնեց մեր վարժարանին 400 Տոլարի նուիրատուութեամբ։

Շնորհակալութիւններ Ստեփան Փիլիպոսեան Հաստատութեան և իր յարգելի նախագահ Տիար Ալպերթ Մամեկեանին, որ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ գուսարան մը կը պահեն։

Սրտագին շնորհակալութիւններ ունինք այս տարիս նաև խումբ մը պատուական այն ազգայիններուն, որոնք իրենց ճիգերը միացուցած մերիին, ազնիւ համագործակցութեամբ կը բերեն իրենց գործնական նպաստը մեր կրթական գործին, իրենց բնակած քաղաքներուն մէջ կազմակերպելով և քաջալերելով Ս. Թարգմանչաց վարժարանի օգնութեան գործը։ Այդ ազնիւ անձնուրութիւններն են, Տիար Պարիկ Այնաքեան (Գարագաս), Ասպետ Տիար Դանիէլ Պազարեան (Սան Փաուլօ), Հոգշ. Տ. Հայկազուն վրդ. Մելքոնեան, Արժ. Տ. Վարդան Քհնյ. Գասպարեան, Արժ. Տ. Բարի Քհնյ. Մէրճեան, Արժ. Տ. Շահէ Ա. Քհնյ. Սէմէրճեան (Ամերիկա), Տիար Յարութիւն Արապեան (Պուէնոս Այրէս)։

Շնորհակալութեան պարտք ունինք Հայաստանէն «Արտասահմանի Հայերի հետ Մշակութային կապի կազմակերպութեան» և անոր պատուական Նախագահին՝ Վսեմ. Տիար Վարդգէս Համազասպեանին, որ ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի ևս նուիրեցին Վարժարանիս Հայ լեզուի դասագիրքեր, ազգային, գրական, մարզական թերթեր, ընթերցանութեան գիրքեր, ու տարիք կու տան մեզի ամէն արձակուրդի առիթով դրկելու ուսուցիչ մը և երկու աշակերտներ, հետևելու մանկավարժական դասընթացքներու։

Շնորհակալութիւն «Նոր Օր», «Ապարէզ» և «Շարժում» թերթերու խմբագրութեանց, որոնք ինչպէս անցեալ տարիներուն, այս տարի ևս տրամադրեցին իրենց թերթերը մեր աշակերտներուն և ուսուցչական կազմին։

Մեր Տեղեկագիրը կը փակենք մեր արդիական ջերմ սիրոյն, յարգանքին և շնորհակալութեան խօսքերով, ուղղուած Ձերդ բարձր Սրբազնութեան, Ամենապատիւ Պատրիարք Հայր, որ իբրև պետը Ս. Յակոբեանց Միաբանութեան և Հայ Երուսաղէմին, Ձեր հայրական գուրգուրանքին և հոգածութեան առարկան ըլլալ Ս. Թարգմանչաց վարժարանի կրթական գործը, ու այդ գործին յանձնառումը վստահեցաք մեր խոնարհ անձին։

Կ'աղօթենք Ձերդ Սրբազնութեան և բոլոր մեր յարգելի նուիրատուներուն ու անձնուէր գործակիցներուն արեշատութեան և երջանկութեան համար։

Խորին ակնածանքով
և եղբայրական սիրով՝

ԿԻՒՐԵՂ ԵՊՍ. ԴԱԲԻԿԵԱՆ

Տեսուչ Ս. Թ. Երկ. Վարժարանի



digitised by A.R.A.R.@